Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 10-ի N 1063 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին) նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է վերահսկողական գործառույթներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ ոչ պարենային արտադրանքի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման, չափումների միասնականության ապահովման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման, թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքի և դրանցով գործարքների իրականացման, համապատասխանության գնահատման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

2. Տեսչական մարմինն ստեղծվում, վերակազմակերպվում է և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչական մարմինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Տեսչական մարմնի կանոնադրության փոփոխությունները Հայաստանի

Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացվում տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) համաձայնությամբ:

3. Տեսչական մարմնի լիազորությունները սահմանվում են «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով:

4. Տեսչական մարմինն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Տեսչական մարմինն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրակա-նացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Տեսչական մարմինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և տեսչական մարմնի անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Տեսչական մարմնի անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմին:

8. Տեսչական մարմինը կազմված է տեսչական մարմնի ղեկավարից, ղեկավարի տեղակալից, որակի ապահովման ստորաբաժանումից և այլ կառուցվածքային ստորա-բաժանումներից:

9. Տեսչական մարմնի նպատակները և խնդիրներն են՝

1) ոչ պարենային արտադրանքի անվտանգության ապահովումը շուկայում.

2) տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը.

3) պետական չափագիտական վերահսկողության ոլորտում չափագիտական կանոնների և նորմերի կատարման ապահովումը և դրանց կանխարգելումն ու վերացումը, չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման ապահովումը:

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Տեսչական մարմինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) տնտեսավարող սուբյեկտի կողմից շուկայահանված ոչ պարենային արտադրանքի՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով պետական վերահսկողության իրականացումը՝ ներառյալ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումների իրականացումը.

2) չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի պահպանման, այդ թվում՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական չափագիտության տարածման ոլորտների պահանջների պահպանման, հաստատված տեսակի չափման միջոցների կիրառման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայության և չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական չափագիտական վերահսկողության իրականացում անվտանգության տեսանկյունից.

3) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման լիցենզիաների պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ հսկողության իրականացում.

4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարածքներում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգի և հարգադրոշմի համապատասխանության, ինչպես նաև «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սահմանված պահանջների, պայմանների պահման նկատմամբ փաստաթղթային հսկողություն և տեղում ստուգումների իրականացում.

5) ոչ պարենային արտադրանքի ռիսկերի գնահատման նպատակով շուկայում օրենքով սահմանված ուսումնասիրությունների իրականացում.

6) շուկայահանված ոչ պարենային արտադրանքի անվտանգության և չափումների միասնականության ապահովման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիաների պահանջների պահպանման ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական ակտերի պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառում.

7) ոչ պարենային արտադրանքի անվտանգության և չափումների միասնականության ապահովման ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում, ինչպես նաև մեթոդական աջակցության և խորհրդատվության տրամադրում,

8) ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացում լիցենզավորող մարմիններ.

9) տնտեսավարող սուբյեկտի գործունեությանն առնչվող, ոչ պարենային արտադրանքի անվտանգությանը և չափումների միասնականության ապահովմանը, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիաների պահանջներին վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում դրա մասին «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տնտեսավարող սուբյեկտների իրազեկման ապահովում.

10) անհրաժեշտության դեպքում ստուգումների արդյունքների վերաբերյալ հանրային իրազեկում.

11) վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների միջոցով իր վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացում և վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտները, տնտեսավարող սուբյեկտները.

12) իր լիազորությունների իրականացման ընթացքում ձեռք բերված օրենքով չարգելված տեղեկատվության փոխանակում այլ տեսչական մարմինների հետ՝ վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով.

13) այլ լիազորություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Տեսչական մարմինը կառավարում է տեսչական մարմնի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), որը կազմված է ինն անդամից:

12. Խորհրդի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի ներկայացմամբ:

13. Խորհուրդը նախագահում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (նախարարի տեղակալը):

14. Խորհրդի լիազորությունները՝

1) հաստատում է տեսչական մարմնի ղեկավարի ներկայացրած տեսչական մարմնի գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը.

2) հաստատում է ստուգումներին առնչվող ուղեցույցները.

3) նախաձեռնում է որակի ապահովման ստորաբաժանման հսկողական գործողությունների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը.

4) հաստատում է տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը.

5) քննարկում է տեսչական մարմնի ղեկավարի կողմից հաստատման ենթակա տեսչական մարմնի տարեկան կամ եռամսյակային հաշվետվությունների նախագիծը և հավանություն տալիս դրան.

6) հաստատում է կատարողականի գնահատման ընթացակարգերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում.

7) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ.

8) հաստատում է տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները՝ տեսչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

15. Տեսչական մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը, որին պաշտոնի է նշանակում, պաշտոնից ազատում և նրա նկատմամբ խրախուսման և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ:

16. Տեսչական մարմնի ղեկավարն ունի 1 տեղակալ, որին պաշտոնի է նշանակում, պաշտոնից ազատում և նրա նկատմամբ խրախուսման և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության վարչապետը:

17. Տեսչական մարմնի ղեկավար կարող է նշանակվել վերջին 10 տարվա ընթացքում պետական կառավարման ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 3 տարին՝ ղեկավարի պաշտոնում, կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և տնտեսագիտություն, կամ իրավագիտություն, կամ հանրային կառավարում, կամ բնագիտական մասնագիտություններով բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի:

18. Տեսչական մարմնի ղեկավարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

19. Տեսչական մարմնի ղեկավարը պատասխանատու է ոչ պարենային արտադրանքների, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովման բնագավառում վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

20. Տեսչական մարմնի ղեկավարը հաշվետու է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և խորհրդին:

21. Տեսչական մարմնի ղեկավարը՝

1) ղեկավարում, համակարգում և վերահսկում է տեսչական մարմնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) սահմանում է իր տեղակալի իրավասությունների շրջանակը.

3) օրենքով, այլ իրավական ակտերով, տեսչական մարմնի կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառների, նպատակների և խնդիրների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում խորհրդին և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը.

4) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի միջոցով Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանն է ներկայացնում տեսչական մարմնի աշխատողների թիվը.

5) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հաստատմանն է ներկայացնում տեսչական մարմնի հաստիքացուցակը.

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրագրեր և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

7) օրենքով իրեն վերապահված իրավասության սահմաններում նշանակումներ է կատարում տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության այն պաշտոններում, որոնցում չեն կատարվում նշանակումներ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից, և տեխնիկական սպասարկման անձնակազմի պաշտոններում, ինչպես նաև աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և պատասխանատվության միջոցներ.

8) իրականացնում է վերահսկողություն տեսչական մարմնին ամրացված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

10) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստուգում իրականացնելու վերաբերյալ տալիս է հրաման կամ հանձնարարագիր, ինչպես նաև ստուգումների արդյունքների հիման վրա կիրառում է պատասխանատվության միջոցներ.

11) խորհրդի հաստատմանն է ներկայացնում տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը.

12) խորհրդի հաստատմանն է ներկայացնում տեսչական մարմնի գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերը.

13) ապահովում է տեսչական մարմնի համագործակցությունն այլ պետական մարմինների հետ.

14) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

22. Տեսչական մարմնի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել պետական կառավարման ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 1 տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն 1 տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում և տնտեսագիտություն կամ իրավագիտություն, կամ հանրային կառավարում, կամ բնագիտական մասնագիտություններով բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի:

24. Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը՝

1) տեսչական մարմնի նպատակներին և խնդիրներին համապատասխան տալիս է տեսչական մարմնի՝ իր համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարականներ և առաջադրանքներ, իրականացնում է հսկողություն դրանց կատարման նկատմամբ.

2) տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է վերջինիս մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

3) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

4) պարբերաբար տեսչական մարմնի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված ոլորտներում աշխատանքների իրականացման ընթացքի մասին.

5) ապահովում է իրեն հանձնարարված ոլորտներում տեսչական մարմնի ղեկավարի հրամանների, հանձնարարագրերի, կարգադրագրերի և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում տեսչական մարմնի ղեկավարին.

6) տեսչական մարմնի ղեկավարի բացակայության դեպքում տեսչական մարմնի ղեկավարի հրամանով փոխարինում է նրան:

7) տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

V. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

25. Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման, տեսչական մարմնի բյուջեի հետ կապված և նախարարության աշխատակազմի կողմից իրականացվող վարչական գործառույթներն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամկետներում:

26. Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է նախարարության միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում: Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում՝ առանձին տողով:

27. Տեսչական մարմնի տարեկան բյուջետային հայտերի և ՄԺԾԾ-ի հայտերի (այսուհետ՝ բյուջետային հայտ) նախագծերի նախապատրաստումն իրականացնում է տեսչական մարմինը:

28. Տեսչական մարմնի կազմած բյուջետային հայտի նախագիծը ներկայացվում է խորհրդի հաստատմանը: Խորհրդի կողմից հաստատվելուց հետո տեսչական մարմինը բյուջետային հայտը ներկայացնում է նախարարություն՝ բյուջետային հայտում ներառելու համար:

29. Տեսչական մարմնի բյուջետային հայտը նույնությամբ նախարարությունը ներառում է իր միջնաժամկետ ծախսերի ծրագրային և բյուջետային հայտում:

30. Տեսչական մարմնի բյուջետային հայտը պետք է ներառի իր բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը:

31. Պետական բյուջեում առանձին տողով արտացոլված տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ֆինանսավորման մեջ փոփոխություններ կամ լրացումներ լիազոր մարմինը կարող է կատարել միայն խորհրդի համաձայնությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 10-ի N - Ն որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն

2. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին

3. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն

4. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն

5. Որակի ապահովման բաժին

6. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 10-ի N 1063 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԱՄՐԱԿՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ						
NN ը/կ	ՀԾ-ի կոդը	Գույքագրման կոդը	Անվանումը	Քանակը	Գինը (դրամ)	Գումարը (դրամ)
1.	1185		Կոմիտասի շենք, 1346.3 քառ. մ	1	37 138 182	37 138 182
2.	2511		Ֆորդ լաբորատորիա	1	92 327 113	92 327 113
3.	4512		Շարժական լաբորատորիա	1	55 875 000	55 875 000
4.	4527		Հունդաի Սոնատա 208ԼԼ60	1	9 500 000	9 500 000
5.	4514		ՎԱԶ21214 538ԼԼ11	1	3 634 000	3 634 000
6.	3587-3687		Աթոռ՝ երկաթյա կմախքով	101	13 000	1 313 000
7.	3409-3425		Աթոռ՝ քարտուղարուհու	17	15 500	263 500
8.	1408-1415		Ղեկավարի բազկաթոռ՝ կտորե	8	39 900	319 200
9.	3190-3191		Ղեկավարի բազկաթոռ՝ դերմանտինե	2	45 100	90 200
10.	1286-1319		Սեղան 1 տումբայով 1.4 մ	34	35 000	1 190 000
11.	1359-1366		Սեղան սովորական 1.2 մ	9	29 900	269 100
12.	3150-3151		Սեղան ղեկավարի N 2	2	45 000	90 000

13.	4119-4123		Ղեկավարի սեղան (սեղան դիմադիր կցորդ)	5	105 800	529 000
14.	3197-3201		Ղեկավարի սեղանի կցորդ	5	50 000	250 000
15.	2301-2315		Համակարգիչ Fujitsu ESPRIMO P2560	15	150 106	2 251 594
16.	3067		Հեռուստացույց JVC	1	216 750	216 750
17.	3082		Հեռուստացույց-2112	1	121 458	121 458
18.	3073-3078		Հեռախոս	6	10 173	61 038
19.	3085		Օդափոխիչ LS-1860	1	640 200	640 200
20.	3088-3089		Օդորակիչ	2	15 000	30 000
21.	3092-3093		Բազկաթոռ	2	47 500	95 000
22.	3094		Բազմոց	1	73 750	73 750
23.	3095		Նիստերի սեղան	1	85 500	85 500
24.	1039-1044		Հոսանքի անխափան սնուցման սարք UPS Mercury Elite850Pro	6	18 720	112 320
25.	2331-2343		Անխափան սնուցման սարք(UPS)PowerComBNT-600AS/N20024711112	13	18 506	240 578
26.	1814-1827		Պրոցեսոր HP-DC5800/Workstations a/	14	244 544	3 423 616
27.	4582-4590		Համակարգիչ Dell OptiPiex 320 MB	9	477 600	4 298 400
28.	2839		Համակարգիչ Dell5150	1	411 283	411 283
29.	2840-2841		Համակարգիչ HP6600	2	411 283	822 566
30.	3069		Համակարգիչ INTEX	1	610 250	610 250
31.	2316-2328		Մոնիթոր Samsung E1920N S/N CL19HVHBC00081 ՊՀԱԾ	13	46 060	598 780
32.	1740-1745		ՄոնիթորDELL19,պրոցես.DELLOPTIPLEX-210.DELLDIMENSIO	6 միայն մոնիթոր	594 000	3 564 000
33.	1939-1955		Մոնիթոր HPL1908w/ monitor a/	17	91 310	1 552 270
34.	4791-4793		Մոնիթոր monitor Dell 17	3	182 629	547 887

35.	4790		Մոնիթոր monitor HP2245	1	182 627	182 627
36.	1761-1770		Տպիչ սարք HP LJ1020-1	10	81 960	819 600
37.	3070		Տպիչ HP6300	1	225 000	225 000
38.	2128		Տպիչ HP2550n	1	89 000	89 000
39.	4127-4147		Երկփեղկանի զգեստապահարան	21	49 900	1 047 900
40.	1535-1545		Ապակյա պահարան	11	59 900	658 900
41.	1569-1598		Սովորական գրապահարան	30	44 900	1 347 000
42.	1486-1497		Խուլ գրապահարան	12	59 900	718 800
43.	1693-1700		Հեռախոսի տակդիր	8	35 000	280 000
44.	4474-4477		Հեռուստացույցի տակդիր	4	15 000	60 000
45.	1215-1222		Տումբա (գրապահոց), գրապահարան խուլ դռներով	8	58 000	464 000
46.	2601-2608		Երկաթյա պահարան	8	10 319	82 552
47.	2941-2951		Երկաթյա պահարան	11	9 724	106 964
48.	2366		Կշեռք Սարտորիուս E-2000D Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված	1	61 060	61 060
49.	2367		Էլեկտրական լաբորատորիայի կշեռք"CAS"ME-2100 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն	1	597 000	597 000
50.	2368		Կշեռք Սարտորիուս E-12000	1	43 101	43 101
51.	2369		Հարգորոշման քարեր 1 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված	1	30	30
52.	2370		Հարգորոշման քարեր 2 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված	1	30	30

53.	2371		Տեխնիկական կշռաքարեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված	1	77	77
			ԸՆԴԱՄԵՆԸ			**229 329 176**
			ՓՈՔՐԱՐԺԵՔ ԵՎ ԱՐԱԳԱՄԱՇ ԱՌԱՐԿԱՆԵՐ			
1.			Ոսկյա ասեղ 750 հարգի	1	13	13
2.			Ոսկյա ասեղ 750 հարգի	1	13	13
3.			Ոսկյա ասեղ 375 հարգի լիգ.քաշ 5.2,փաստ. քաշ 14.41	1	6	6
4.			Ոսկյա ասեղ 500 հարգի լիգ.քաշ3.7,փաստ. քաշ 12.51	1	29	29
5.			Ոսկյա ասեղ 500 հարգի լիգ.քաշ 6.2,փաստ. քաշ 14.35	1	29	29
6.			Ոսկյա ասեղ 583 հարգի լիգ.քաշ 5.0,փաստ. քաշ 12.85	1	10	10
7.			Ոսկյա ասեղ 583 հարգի լիգ.քաշ 4.3, փաստ. քաշ 11.3	1	10	10
8.			Ոսկյա ասեղ 583 հարգի լիգ.քաշ 3.3, փաստ. քաշ 10.84	1	10	10
9.			Ոսկյա ասեղ 583 հարգի լիգ.քաշ 4.5, փաստ. քաշ 13.95	1	10	10
10.			Ոսկյա ասեղ 583 հարգի լիգ. քաշ 3.3, փաստ. քաշ 11.0	1	10	10
11.			Ոսկյա ասեղ 585 հարգի լիգ.քաշ 3.7, փաստ. քաշ 15.87	1	222	222
12.			Ոսկյա ասեղ 585 հարգի լիգ.քաշ 3.4, փաստ. քաշ 15.46	1	222	222
13.			Ոսկյա ասեղ 916 հարգի լիգ.քաշ 1.8, փաստ. քաշ 5.82	1	39	39
14.			Արծաթյա ասեղ 875 հարգի լիգ. քաշ 4.3	1	3	3
15.			Արծաթյա ասեղ 916 հարգի լիգ. քաշ 3.3	1	3	3
16.			Արծաթյա ասեղ 920 հարգի լիգ. քաշ 2.9	1	39	39
17.			Ոսկյա ասեղ 375 հարգի լիգ. քաշ 3.5,փաստ. քաշ 16.28	1	6	6
18.			Ոսկյա ասեղ 583 հարգի լիգ. քաշ 3.7,փաստ. քաշ 18.17	1	10	10
19.			Ոսկյա ասեղ 585 հարգի լիգ. քաշ 3.7,փաստ. քաշ 16.26	1	222	222
20.			Ոսկյա ասեղ 585 հարգի լիգ. քաշ 3.4,փաստ. քաշ 16.66	1	222	222
21.			Ոսկյա ասեղ 585 հարգի լիգ. քաշ 3.4,փաստ. քաշ 16.37	1	222	222
22.			Ոսկյա ասեղ 585 հարգի լիգ. քաշ 4.4,փաստ. քաշ 17.31	1	222	222
23.			Ոսկյա ասեղ 958 հարգի լիգ. քաշ 4.3, փաստ. քաշ 16.73	1	26	26

24.			Ոսկյա ասեղ 958 հարգի լիգ. քաշ 1.9, փաստ. քաշ 6.63	1	26	26
25.			Արծաթյա ասեղ 875 հարգի լիգ. քաշ 3.9, փաստ. քաշ 15	1	0	0
26.			Ոսկյա ասեղ դեղին 750 հարգի լիգ.քաշ 0.92,փաստ. քաշ 7.8	1	21 600	21 600
27.			Ոսկյա ասեղ սպիտակ 750 հարգի	1	21 600	21 600
28.			Ոսկյա ասեղ դեղին 583 հարգի լիգ.քաշ 1.11,փաստ. 6.8 քաշ	1	21 600	21 600
29.			Ոսկյա ասեղ դեղին 585 հարգի լիգ.քաշ 0.92, փաստ. քաշ 6.2	1	21 600	21 600
30.			Ոսկյա ասեղ սպիտակ 583 հարգի լիգ.քաշ 1.17,փաստ. քաշ 10.5	1	21 600	21 600
31.			Ոսկյա ասեղ սպիտակ 585 հարգի լիգ, քաշ 1.11,փաստ. քաշ 9.6	1	21 600	21 600
32.			Տեխնիկական կշեռք I կարգի Т-1-1	1	308	308
			ԸՆԴԱՄԵՆԸ			**131 530**
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՓՈՔՐԱՐԺԵՔ ԵՎ ԱՐԱԳԱՄԱՇ ԱՌԱՐԿԱՆԵՐ						**229 460 706**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ